

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ, ԱՄԲԻՈՆԻ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՆ

(1 Յունուար - 31 Դեկտեմբեր 2008)

Յակոբ Օշական Չանդրըրլի Բանտին Մէջ
Դասախօս՝ Մարկ Նշանեան
12 Մարտ 2008

2008 տարուան Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնի հրապարակային առաջին դասախօսական ձեռնարկին բանախօսն էր Համալսարանի հիւր դասախօս՝ Դոկտ. Մարկ Նշանեան, որ 2007-2008 կրթաշրջանի ամբողջ տեւողութեան, հայ գրականութեան տարբեր նիւթեր դասաւանդեց համալսարանի հայ ուսանողներուն:

Նշանեան, որ Օշական-Չանդրըրլ առնչութեան անդրադարձած է նաեւ նախապէս՝ իր մենագրութիւններուն ընդմէջէն կամ դասախօսութիւններու ընթացքին, այս անսովոր վերնագիրը կրող նիւթին հիմնական մասին անցնելէ առաջ, անհրաժեշտ նկատեց հանգամանօրէն ներկայացնել Օշականի մասին կարգ մը գրական ու կենսագրական մանրամասնութիւններ, որոնք սերտօրէն կ'առնչուին դասախօսութեան նիւթին:

Առաջինը Օշականի *Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան* կոթողային շարքի Ժ. հատորին մէջ տեղ գտած մէկ ընդարձակ տողատակի ծանօթագրութենէն է (էջ 102-106): Այնտեղ, Օշական կը խօսի *Մնացորդաց* վէպի եռագրութեան երրորդ՝ բայց երբեք չգրուած հատորին՝ «Դժոխքէն»ին պարունակութեան մէկ ուրուագծումին մասին: Տեսարանը կը պատկերէ արտօրեալ մտաւորականներուն միջեւ ծաւալուն խօսակցութիւն մը, ԺԹ. դարու մեր մշակութային իրագործումներուն մասին. զրոյցը կ'աւարտի Կոմիտասի մատուցած Ս. Պատարագով. «Ողջոյն»ի ժամանակ տեղի կ'ունենայ ամէնէն սրտաշարժ տեսարանը, երբ մեր մտաւորականները սրտալիօրէն կ'ողջագործուին, մինչ ատելի ետք կը հնչէ Կոմիտասի անպատմելի «Տէր Ողորմեա»ն: Օշականի տեղեկաբերին՝ Չանդրըրլն փրկուած Բիւզանդ Պոզաճեանի վկայութեամբ, «Օրհնեալ Եղերուք»էն ետք, կը բացուի բանտին դուռը ու ոստիկանները դուրս կը հանեն ներսը գտնուողները, զանոնք շղթայակապ տանելու համար դէպի նահատակութիւն. բանտին մէջ կը մնան 3-4 հոգի, ներառեալ Պոզաճեան, որ կ'ազատի բարձրաստիճան թուրք կաթնեղբոր մը միջամտութեան շնորհիւ:

Երկրորդ՝ Կոմիտասի անձը մեծապէս հետաքրքրած է Օշականը: Ան ծրագրած էր *Սահակ Պարզեւեան*ով սկիզբ առած եռանկարին Բ. հատորին հերոսը դարձնել Կոմիտասը: «Դժոխքէն»ին նման, Օշականի նաեւ այս մտադրութիւնը չէ իրագործուած. «*Յիշեալ [զոյգ] գործերուն անաւարտ մնալուն պատճառը կրնայ թերեւս կապ մը ունենալ Օշականի ուղեղին մէջ կազմուած Կոմիտասի կերպարին հետ*», ըսաւ Նշանեան:

Երրորդ մանրամասնությունը Օշականի ինքնակենսագրական *Կեանքին Պէս* վեպէն է: Այնտեղ Օշական կը պատմէ իր ծնունդի հանգամանքներուն մասին, եւ թէ ինչպէս ինք նոյնիսկ գրկուած եղած է մայրական կաթէն, որովհետեւ մայրը չքաւոր ընտանիքին ապրուստը հոգալու համար ստիպուած եղած է ստնտու դառնալ հարուստ ընտանիքի մը նորածինին: Այս պատմութեան մէկ մօտաւոր տարբերակը կու տայ նաեւ Օշականի մօտիկ բարեկամ Գէորգ Չաքրեան:

Դասախօսութեան այս հանգրուանին Նշանեան հարկ սեպեց անդրադառնալ այն հարցին, թէ 1934էն ետք, Օշական ինչու գրեթէ վերջնականապէս կը դադրի վիպական ստեղծագործութենէ:

Իբրեւ առաջին պատճառ, Նշանեան կը նշէ Օշականի առողջական վիճակը՝ սրտի թեթեւ տագնապ մը, արդեօ՞ք հետեւանք այն պրկումին, որ ինքզինքին պարտադրեց Օշական իր հազարաւոր վիպական էջերուն արտադրութեան ի խնդիր, քանի մը տարուան մէջ: Իսկ թէ ինչ կը մնար իրեն գրելիք, ապա անիկա *Մնացորդացի* Գ.՝ «Դժոխքէն» բաժինն էր:

Օշական կ'ըսէ, թէ շարունակել պիտի նշանակէր շիտկէ-շիտակ քալել մահուան վրան՝ ինքնասպանութեան փորձ, որ կը ստանայ գերորոշագրուած իմաստ, քանի որ Աղէտին նիւթին մօտենալը՝ այսինքն բացէ-ի-բաց մահուան քնազաւառին մէջ մտնելը, քալել էր դէպի մահ:

Վիպական արտադրանքին կասեցումին իբրեւ պատճառ, Նշանեան մատնանշեց նաեւ Օշականի վրայ կատարուած տմարդի յարձակումները փարիզեան *Մենքի* տղոց կողմէ, այսինքն անոնցմէ, որոնք ըստ Օշականի, պաշտօնը ունէին զինք պաշտպանելու:

Իբրեւ այլ հիմնաւոր պատճառ, Նշանեան յիշատակեց Օշականի վկայութիւնը, որ մինակ վիպող ոյժը անբաւական պիտի ըլլար Աղէտին պարագրումին: Թէեւ ահաւոր, բայց իր ահաւորութեան մէջ տարօրինակօրէն միաձեւ Աղէտը իբրեւ վէպի նիւթ, խոտոր կը համեմատի արուեստի զանազանութեան պահանջին հետ:

Կրկին Օշականը վկայելով, Նշանեան ըսաւ, թէ անոր կը պակսէին անհրաժեշտ փաստական տուեալները, վկայութիւնները, որոնք նախապայման էին Աղէտին անդրադարձող վէպի մը:

Այս բաժինը եզրափակելով, Նշանեան ըսաւ, թէ նոյնքան բարացուցական է *Մնացորդացի* այս բաժնին գրուած չլլալը, որովհետեւ «*Օշականի գործը հասած է Աղէտին ոչ թէ իր իրագործումով, այլ իր ձախողութեամբ*»:

Դասախօսութեան յաջորդ բաժնով, Մարկ Նշանեան Համապատկերի Թ. եւ Ժ. հատորներէն ընթերցումներ կատարելով, փորձեց ներկայացնել «Դժոխքէն»ի ծրագիրը. ան յիշեց Սողոմենց Սողոմի կերպարն ու անոր անցած ուղին քրքական բանտէն մինչեւ փաշայութիւն, ապա Տէր Զօր՝ իբրեւ բուրբ զինուոր, սթափում, սարսափ եւն.: Այլուր Օշական կը գրէ Չանդըրըի Պատարագին ու անոր յաջորդող ձերբակալութեան տեսարանին մասին, վկայակոչելով Պոզաճեանը:

Դասախօսութեան հիմնական՝ Օշական-Չանդըրը բաժնին հասնելով, Նշանեան ունկնդիրներուն թողուց հետեւեալ հաստատումները.

Ա. Օշական ոչինչ գրած է առանց նախագոյ պատումի,

Բ. Այս տրամաբանութեամբ, իբրեւ տեղեկաբեր, ան վկայակոչած է Պոգաճեանը, որ ըստ Օշականի Չանդրըրէն ազատած է մայրական կաթին իրաւունքովը...

Գ. Սակայն Պոգաճեան Չանդրըրը չէ գտնուած, այլ՝ Այաշ, ուստի չէր կրնար ըլլալ Օշականի տեղեկաբերը:

Դ. Օշական կարդացած ըլլալու էր Պալաքեանի, Շամտանճեանի ու Քէշեանի յուշագրութիւնները, որոնք կը խօսէին Չանդրըրի մասին:

Ուստի, ան մտովին ստեղծեր էր վիպական պզտիկ պատում մը՝ հսկում-պատարագ-մահ եւ քանի մը վերապրողներ, որպէսզի տեղեկաբեր մը ունենար...: Իսկ այդ տեղեկաբերը եթէ իրօք Պոգաճեանը չէր, ապա ո՞վ էր? Ըստ Նշանեանի, այդ տեղեկաբերը նոյնինքն Օշականի Չանդրըրը գտնուած ցնորական կրկնապատկերը ըլլալու է (որու մէկ այլ իրավիճակի մը մէջ գտնուող օրինակին կը հանդիպինք Ժ. հատորին մէջ): Աւելին. Օշական այլուր կատարուած վկայութեամբ մը, ինքզինք ճակատագրակից նկատելով իր նահատակ գրչակից եղբայրներուն, կ'ընէ հետեւեալ սրտաշարժ խոստովանութիւնը. «*ես ալ անոնցմէ մէկն եմ...*»:

Ռաֆայէլ Լեմբին եւ Հայոց Յեղասպանութիւնը.
Թէ Ինչպէս Եղեռնի Զոհերը Հարբեցին
ՄԱԿի Յեղասպանութեան Ուխտի Որդեգրման Դամբան
Դասախօս՝ Խաչիկ Մուրատեան
23 Յունիս 2008

2007-2008 տարեշրջանի Հայագիտական Ամբիոնի հրապարակային 2րդ դասախօսական ձեռնարկին բանախօսն էր Հայկազեան Համալսարանէն շրջանաւարտ, ներկայիս Պոսթոնի *Armenian Weekly* շաբաթաթերթի խմբագիր Խաչիկ Մուրատեանը, որ սփիւռքահայ մամուլէն ներս մնալուն եւ որակաւոր ներկայութիւն մըն է, շնորհիւ իր ուսումնասիրութիւններուն, յատկապէս Յեղասպանութեան վերաբերող հարցազրոյցներուն, յօդուածներուն եւն.:

Բացման Խօսքը կատարեց Անդրանիկ Տազեւեան, որ զուգահեռ մը անցընելով Խաչիկ Մուրատեանի ուսանողական արժանիքներուն եւ մասնագիտական հմտութիւններուն միջեւ, բնորոշեց զինք իբրեւ «*վերջին տարիներու ազգային բերքի լաւագոյն դէմքերէն մէկը*»:

Մուրատեան իր բանախօսութեան սկզբնաւորութեան ներկայացուց այն ջանքերը, զորս կը թափէ թրքական կողմը Մեծ Եղեռնը որակելու որեւէ այլ բառով, բացի ցեղասպանութենէն, որպէսզի Հայկական Յեղասպանութիւնը չդիտուի միջազգային իրաւական տեսանկիւնով, եւ ցեղասպանը չկրէ համապատասխան պատասխանատւութիւն: Մուրատեան թուարկեց այդ ուղղութեամբ յառաջ քաշուող կարգ մը թրքական պատճառաբանութիւններ, միաժամանակ ցոյց տալով անոնց հակազիտական ու անհամոզիչ բնոյթը:

Ապա անցնելով իր հիմնական նիւթին, Մուրատեան ներկայացուց ցեղասպանութիւն եզրին հեղինակ Ռաֆայէլ Լեմբինի կենսագրութիւնը, յատուկ ուշադրութիւն սեւեռելով եւ կարեւորութիւն ընծայելով անոր կեանքի այն հանգրտաններուն ու փորձառութիւններուն, որոնք սերտօրէն աղերս ունին Հայկական Յեղասպանութեան հետ:

Լեմքին մանկութենէն հետաքրքրութիւն ցուցաբերած է իրաւագուրկ ժողովուրդներու հանդէպ. իր ուսանողական օրերուն Պերլինի մէջ կ'ահաբեկուէր Թալէաթ փաշա. այդ առթիւ, ան նոյնիսկ վեճի կը բռնուի իր դասախօսին հետ, պաշտպանելով Սողոմոն Թեկլիրեանը, հիմնուելով այն համոզումին վրան, թէ ինչու՞ պէտք է դատի կանչենք այն անձը, որ սպաննած է ամբողջ ժողովուրդ մը բնաջնջող մարդ մը: Այստեղ Լեմքին արդէն յստակօրէն ցոյց կու տայ իր կեցուածքը ոչ միայն հայերուն առնչութեամբ, այլ ընդհանրապէս բռնատիրական իշխանութիւններու հանդէպ, մեկնելով այն համոզումէն, որ գերիշխանութիւն կը նշանակէ ծառայել ժողովուրդին, եւ ոչ թէ միլիոնաւոր մարդ սպաննել:

Անձնական տարբեր փորձառութիւններ, հրեաներու հանդէպ ծայր առած հալածանքները կը մղեն Լեմքինը որ հրաժարի լեզուաբանութենէն եւ ամբողջովին նուիրուի ժողովուրդներու բնաջնջումը պատժող ու կանխարգիլող միջազգային օրէնքի մը յառաջացումին: 1933ին, կը փորձէ մասնակցիլ Ազգերու Լիկայի ժողովին, սակայն լեհական իշխանութիւնները չեն արտօներ իրեն. փոխարէնը, պատուիրակի մը միջոցով, Լեմքին ժողովին կը ներկայացնէ առաջարկ մը, ուր barbarism եւ vandalism բառերով կը բնութագրէ ժողովուրդներու բնաջնջման միտող փորձերը: Լեմքինի առաջարկը կ'անտեսուի:

Գերմանիոյ ներխուժումէն կարճ ժամանակ անց, Լեմքին կը յաջողի խոյս տալ Լեհաստանէն, ու ի վերջոյ կը հասնի ԱՄՆ: Այնտեղ ականջալուր կ'ըլլայ Եւրոպայի մէջ գերմանացիներուն գործադրած բռնութիւններուն: Լեմքին չէր մոռցած իր մտասեւեռումը: 1944ին առաջին անգամ *Axis Rule In Occupied Europe* գիրքին մէջ կը գործածէ genocide բառը, որ կազմուած է յունարէն ու լատիներէն արմատներէ եւ բառացիօրէն ցեղասպանութիւն կը նշանակէ:

Լեմքին կը հետեւի նիւրեմպերկեան դատավարութիւններուն: Հայկական առնչութիւն: Ամերիկեան եւ ֆրանսական մամուլը զանազան վերլուծումներով կ'անդրադառնան այս բառին: Հայկական թերթերն ալ, օգտուելով այդ աղբիւրներէն, քննարկումի առարկայ կը դարձնեն ցեղասպանութիւն բառը, արդէն սերտօրէն առնչելով անիկա Մեծ Եղեռնին: Առաջին անդրադարձումը կ'ըլլայ *Յառաջին* մէջ Շաւարշ Միսաքեանի գրչով: Խմբագրականին միտք բանին կը ծաւալի այն խորհրդածութեան շուրջ, որ աշխարհ արդեօք այսքան պէ՞տք է սպասէր որ այս բառը գտնուէր եւ ժողովուրդներու բնաջնջումը մուտք գործէր միջազգային ասպարէզ: Ցեղասպանութիւն բառին յաջորդ անդրադարձը կրկին Միսաքեանի կողմէ լոյս կը տեսնէ *Ազդակի* մէջ:

1946ին Լեմքին հսկայական աշխատանք կը տանի, որպէսզի որդեգրուի ցեղասպանութիւնը դատաւարտող ՄԱԿի բանաձեւը: *Հայրենիք* խմբագրականով մը կ'անդրադառնայ այս բանաձեւին, եւ հայկական ցեղասպանութեան պատժելիութեան մասին ակնարկութիւններ ալ կ'ընէ, սակայն տակաւին ամէն բան յստակ չէր հայոց միտքերուն մէջ:

1948ին ՄԱԿը կ'որդեգրէ «Ցեղասպանութեան Ուխտ»ը, դարձեալ մեծ կ'ըլլայ վաստակը Լեմքինի: Մեծապէս յատկանշական է, որ ցեղասպանութիւն ըմբռնումը բնորոշող բոլոր հինգ արարքներն ալ, որոնք կ'էտ առ կ'էտ նշուած են «Ուխտ»ին մէջ, կը համապատասխանեն Հայկական Ցեղասպանութեան: Լեմքին շատ ուշադիր եղած է, որպէսզի «Ցեղասպանութեան Ուխտ»ը կանխող ՄԱԿի քննարկումներուն մէջ, թուրք, հայ, հրեայ եւ հայկական ու հրեական ցեղասպանութիւններուն ուղղակիօրէն առնչող արտայայտու-

թիւններ չհնչեն, որովհետեւ, կ'ըսէ Լեւոնին, «*ինձի համար շատ կարեւոր էր, որ թուրքիան ստորագրէ «Ուխտ»ը*»:

Լեւոնինի թողօնին մէջ կը հանդիպինք բազմաթիւ վաւերաթուղթերու, որոնք կ'առնչուին հայկական կոտորածներուն, համիտեան ջարդերէն մինչեւ Մեծ Եղեռն: Ան տարբեր հարցազոյցներու մէջ կը յիշատակէ, թէ ինք ցեղասպանութեան հարցով հետաքրքրուած է, երբ անիկա պատահեցաւ հայերուն, թէ հայերը շատ դժուար ժամանակէ անցան բայց ոճրագործները չպատժուեցան: Թեւիլթեանի դատավարութենէն ետք Լեւոնին մտածած է, որ գոհը չէ, որ պիտի պատժէ ոճրագործը, այլ՝ դատարանը, օրէնքը. այս համոզումը խթան հանդիսացած է, որ ինք ոգի ի բոլին լծուի իր կեանքի աշխատանքին:

Հայկազեան Հայագիտական Հանդէսի Ի.Ը. Հատորի Շնորհանդէսը

Հայկազեան Հայագիտական Հանդէսի Ի.Ը. հատորի շնորհանդէսը տեղի ունեցաւ 16 Յուլիս 2008ի երեկոյեան ժամը 7:30ին, Հայկազեան Համալսարանի հանդիսասրահին մէջ, ներկայութեամբ ՄԱՀԱԵ Միութեան նախագահ՝ Վեր. Մկրտիչ Գարակէօզեանի, Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեանի, պետական երեսփոխան Տոքթ. Եղիկ Ճէրճեանի, ուսուցիչներու, մտատրականներու եւ *Հանդէսի* բարեկամներու յոյլի մը:

Բացման խօսքը արտասանեց *Հանդէսի* պատասխանատու քարտուղար Անդրանիկ Տազեւեան, որ ողջունելով ներկաները ներկայացուց *Հանդէսի* խմբագրակազմի բազմերես աշխատանքներուն բնոյթը, յատուկ շեշտ դնելով խմբային աշխատանքի օգտակարութեան: Ապա ան հերթաբար ամպլոն հրաւիրեց հանդիսութեան ելոյթ ունեցողները:

ՀՀ *Հանդէսի* պատասխանատու խմբագիր Հայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեան, ներկայ Ի.Ը. հատորը եւ ընդհանրապէս *Հանդէսի* ամբողջ 28 հատորանի հաւաքածոն համարեց հայագիտութեան հերթական ձեռքբերումներէն մին: Արդարեւ, ըստ վարդապետին, ոչ միայն այս տարի, այլեւ *Հանդէսի* Ա. հատորի հրատարակութեան օրերուն, նոյնիսկ Ոսկեդարուն, եղած է մեծամասնութիւն մը, որ արհամարհած է գիրն ու գրականութիւնը, անտեսած է միտքը: Իսկ միտքը անսահման է, որովհետեւ «*Աստուած Միտք է*», այդպիսով, անտարբեր մեծամասնութեան կողքին, միշտ գոյութիւն ունեցած է փոքրամասնութիւն մը, որ հաւատացած է «*մտքի մեծութեան*», նուիրուած է Մտքի զարգացման: Հայագիտութիւնը այսօր կը գոյատեւէ, պիտի շարունակէ գոյատեւել ա՛յդ փոքրամասնութեան շնորհիւ:

Օրուան զեկուցաբերն էր Տիկ. Վարդի Բեշիշեան, որ կ'ապրի Հալէպ եւ ծանօթ անուն է հայագիտութեան ասպարէզին մէջ: Ան նախ ողջունեց *Հանդէսի* անխափան հրատարակութիւնը եւ խմբագրակազմի բժախնդիր ու հետեւողական աշխատանքը, ապա նիւթերու դասակարգում կատարելով ներկայացուց հատորին բովանդակութիւնը: Տիկին Բեշիշեան կարեւորեց խմբագրակազմի այն մօտեցումը, որ իւրաքանչիւր հատորի մէջ կ'արձարծուի հայագիտութիւնը յուզող հարց մը եւ ի հարկին կ'առաջարկուին նաեւ լուծումներ: Այս հատորի խմբագրականին անդրադառնալով, ան գնահատեց այն մտածումը, որ արդի խօսակցական եւ գրական արեւմտահայերէնը աղճատումի ենթարկուած է, ու անհրաժեշտ է հիմնել համասփիւրքեան «ամբոց» մը, որ

ձեռնարկէ արեւմտահայերէնի պահպանումին: Մի առ մի ներկայացնելով Հանդէսի բոլոր բաժիններուն մէջ լոյս տեսած երկլեզու գրութիւնները, տիկին Քեշիշեան ներկաներուն ուշադրութեան յանձնեց այն երեւոյթը, որ սոյն հատորի բովանդակութեան մէջ կարելոր տեղ կը գրաւէ Սփիւռքի հայ գաղութներու պատմութեան նուիրուած հարցերու քննարկումը: Եզրափակելով իր խօսքը, Վարդի Քեշիշեան հաստատեց որ ՀՀՀանդէսը կը շարունակէ կամրջել հայրենի ու սփիւռքահայ մտաւորականութիւնը, աւելին՝ ան կամուրջ կը հանդիսանայ նաեւ սփիւռքահայ գաղութներու հայագէտներուն միջեւ:

Եզրափակիչ խօսքը արտասանեց Վեր. Դոկտ. Հայտոսեան: Ողջունելով ներկաները Հայկազեանի յարկին տակ, ան Հանդէսը նկատեց համալսարանին կարելոր ձեռքբերումներէն մին, որ միշտ ալ հայագիտութեան պրիսմակէն կը փորձէ վերլուծել ազգային ինքնութեան զանազան հարցերը: Նախագահը վստահեցուց, որ Համալսարանը լրջօրէն այժմեական կը նկատէ «Հայկական ինքնութեան զանազան հարցերը եւ անոնց ազդեցութիւնը հայագիտական նիւթերու վրայ», եւ համաձայն գտնուեցաւ որ այդ առումով նաեւ Հայկազեանէն աւելի կ'ակնկալուի:

Շնորհանդէսի աւարտին, ինչպէս միշտ, ներկաները թերթատեցին Համալսարանի հայագիտական գրադարանին 2007-2008ին ձեռք բերած նոր գիրքերէն նմոյշներ եւ հիւրասիրուեցան կարկանդակով, զոր հատեցին Վեր. Հայտոսեան եւ Հայր Կռանեան: